Հավելված N 2
ՀՀ կառավարության 2025 թվականի
դեկտեմբերի 25-ի N 1974 - Ն որոշման

ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԵՎ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԱՆՎՃԱՐ ԿԱՄ ՀԱՄԱՎՃԱՐԱՅԻՆ ՍԿԶԲՈՒՆՔՈՎ ՄԱՏՈՒՑՎՈՂ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ԾԱՎԱԼԸ ԵՎ ԼՐԱՑՈՒՑԻՉ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿԸ

1. Սույն հավելվածով սահմանվում է առողջության ապահովման և բարելավման ծրագրերի շրջանակներում բժշկական օգնության և սպասարկման ծառայությունների նվազագույն ծավալը, լրացուցիչ ծառայությունների ցանկը:

2. Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող ռեզիդենտ բնակչությանը (բացառությամբ 1-ին ենթակետում ընդգրկված անձանց), անկախ օրենքով սահմանված կարգավիճակից առողջության պահպանման և բարելավման ծրագրի շրջանակներում մատուցվում են.

1) մինչև 1 տարեկան երեխաների բժշկական օգնություն և սպասարկում.

2) ՀՀ կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 25-ի N 1105-Ն որոշմամբ սահմանված մանկական սննդի տրամադրում.

3) մինչև 18 տարեկան երեխաների քրոնիկ վերականգնողական բժշկական օգնություն և սպասարկում՝ այդ թվում առողջարանային բուժում.

4) մինչև 18 տարեկան երեխաների մտավոր, հոգեկան, լսողական և զարգացման այլ հապաղումներ և խանգարումների հետևանքով առաջացած հիվանդությունների և վիճակներ, որոնց բժշկական օգնությունը և սպասարկման կազմակերպումը և իրականացումը կարող է կազմակերպվել ցերեկային ստացիոնար և (կամ) արտահիվանդանոցային պայմաններում.

5) պալիատիվ բժշկական օգնության և սպասարկման ծառայություններ.

6) անպտուղ զույգերի համար վերարտադրողական օժանդակ տեխնոլոգիաների կիրառմամբ բժշկական օգնության ծառայություններ.

7) փոխպատվաստման և փոխպատվաստված անձանց շարունակական բժշկական օգնության և սպասարկման ծառայություններ:

3. Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող չապահովագրված անձանց համար բժշկական օգնության և սպասարկման ծառայությունների նվազագույն ծավալն իր մեջ ներառում է՝

1) հիվանդանոցային բժշկական օգնության և սպասարկման հետևյալ տեսակները և ծառայությունները՝ Հայաստանի Հանրապետության առողջապահության բնագավառի պետական կառավարման լիազոր մարմնի (այսուհետ՝ լիազոր մարմին) կողմից սահմանված հիվանդությունների և վիճակների ցանկի և տվյալ ծառայության իրականացումը կարգավորող չափորոշիչների համաձայն՝

ա. վերակենդանացման բժշկական օգնության ծառայություններ,

բ. տուբերկուլյոզի բժշկական օգնության ծառայություններ,

գ. հոգեկան և նարկոլոգիական հիվանդությունների բժշկական օգնության ծառայություններ,

դ. ինֆեկցիոն, այդ թվում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի, հիվանդությունների բժշկական օգնության ծառայություններ,

ե. հեմոդիալիզի և պերիտոնեալ դիալիզի ծառայություններ,

զ. հիվանդանոցային պայմաններում արտահիվանդանոցային անհետաձգելի բժշկական օգնության ծառայություններ,

է. ծննդօգնություն և հղիության ախտաբանություն,

ը. սրտամկանի սուր ինֆարկտի անհետաձգելի վիրահատական բուժման ծառայություններ (կորոնար անոթների ստենտավորում),

թ. գլխուղեղի սուր կամ ենթասուր իշեմիկ կաթվածների էնդովասկուլյար բուժման ծառայություններ,

ժ. աորտայի անևրիզմաների պատռվածքների և (կամ) շերտազատումների վիրահատական բուժման ծառայություններ,

ժա. չարորակ նորագոյացությունների վիրահատական բուժման ծառայություններ,

ժբ. սուր վերականգնողական բժշկական օգնություն և սպասարկում,

ժգ. այրվածքաբանական ծառայություններ,

ժդ. Հեպատիտ C ախտորոշմամբ անձանց բժշկական օգնության և սպասարկման ծառայություններ.

2) արտահիվանդանոցային բժշկական օգնության և սպասարկման հետևյալ տեսակները և ծառայությունները՝ լիազոր մարմնի կողմից սահմանված ծավալների և տվյալ ծառայության իրականացումը կարգավորող չափորոշիչների համաձայն՝

ա. առողջության առաջնային պահպանման ծառայություններ,

բ. հղիների նախածննդյան և ծննդկանների հետծննդյան (42 օր) հսկողություն,

գ. շտապ և անհետաձգելի բժշկական օգնության և սպասարկման ծառայություններ,

դ. արտահիվանդանոցային լաբորատոր-գործիքային ախտորոշիչ հետազոտությունները՝ հաստատված չարորակ նորագոյացություններով և տուբերկուլյոզ ախտորոշում ունեցող պացիենտներին:

4. Համավճարային պայմաններով բժշկական օգնության և սպասարկման տեսակները՝ լիազոր մարմնի կողմից հաստատված հիվանդությունների և վիճակների ցանկին և չափորոշիչներին համապատասխան՝

1) անհետաձգելի բժշկական օգնության ծառայություններ.

2) մաշկային և սեռական ճանապարհով փոխանցվող հիվանդությունների բժշկական օգնության ծառայություններ.

3) ուռուցքաբանական և արյունաբանական հիվանդությունների ճառագայթային և քիմիաթերապևտիկ բժշկական օգնության ծառայություններ.

4) սրտի անհետաձգելի վիրահատությունների ժամանակ կատարվող աորտակորոնար շունտավորման բժշկական օգնության ծառայություններ:

5. Սույն հավելվածի 2-րդ և 3-րդ կետերով նախատեսված նվազագույն ծավալում ներառված ծառայություններից բացի, N 1 հավելվածով սահմանված անձանց անվճար կամ համավճարային սկզբունքով մատուցվում են նաև հետևյալ լրացուցիչ ծառայությունները՝ լիազոր մարմնի կողմից հաստատված հիվանդությունների և վիճակների ցանկին և չափորոշիչներին համապատասխան, մասնավորապես՝

1) վիրահատական, ինչպես նաև ցանկացած այլ ոչ վիրահատական, կյանքին վտանգ սպառնացող անհետաձգելի հիվանդանոցային բուժում պահանջող քրոնիկ հիվանդությունների սրացումների և բարդությունների թերապևտիկ բուժումը.

2) վերականգնողական բժշկական օգնության և սպասարկման ծառայությունները՝ միայն սույն որոշման N 1 հավելվածի 1-ին կետի 1-ին, 3-րդ, 4-րդ, 5-րդ, 7-րդ, 11-րդ, 13-ից 19-րդ ենթակետերով սահմանված անձանց.

3) ստոմատոլոգիական բժշկական օգնության հետևյալ ծառայությունները՝ ատամի հեռացում, պուլպիտի բուժում, պերիոդոնտիտի բուժում, կարիեսի բուժում՝ միայն սույն որոշման N 1 հավելվածի 1-ին կետի 15-րդ ենթակետում ընդգրկված ֆունկցիոնալության խորը աստիճանի սահմանափակումով հաշմանդամություն ունեցող անձանց և հաշմանդամության 1-ին խումբ ունեցող անձանց, 3-րդ, 11-րդ, 19-րդ ենթակետերով սահմանված անձանց:

6. Սույն հավելվածի 5-րդ կետով նախատեսված ծառայությունները համավճարի պայմաններով տրամադրվում են նաև սույն որոշման N 1 հավելվածի 1-ին կետի 1-ին, 4-ից 9-րդ, 15-րդ ենթակետերում ընդգրկված՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացի, ռեզիդենտ և ֆունկցիոնալության ծանր և միջին աստիճանի սահմանափակումով հաշմանդամություն ունեցող անձանց և հաշմանդամության 2-րդ և 3-րդ խումբ ունեցող անձանց, 17-րդ, 18-րդ ենթակետերում ընդգրկված անձանց:

7. Արտահիվանդանոցային լաբորատոր-գործիքային ախտորոշիչ հետազոտությունները տրամադրվում են՝ միայն սույն որոշման N 1 հավելվածի 1-ին կետի 1-ից 12-րդ ենթակետերով սահմանված անձանց:

8. Տնային մահերի դեպքում ախտաբանաանատոմիական դիահերձման ծառայությունները տրամադրվում են N 1 հավելվածով սահմանված խմբերում ընդգրկված անձանց:

9. Նորագույն և թանկարժեք տեխնոլոգիաներով մատուցվող ծառայություններից, առողջության պահպանման և բարելավման ծրագրերի շրջանակում, միայն սույն որոշման N 1 հավելվածի 1-ին կետի 4-րդ և 5-րդ ենթակետում ընդգրկված զինծառայողների և նրանց հավասարեցված անձանց, փրկարար ծառայողների ընտանիքների անդամների, երկարամյա ծառայության զինվորական կենսաթոշակառուների, կենսաթոշակի անցնելու կապակցությամբ ազատված փրկարարական ծառայողների, 6-րդ, 7-րդ, 8-րդ և 11-րդ ենթակետերում ընդգրկված անձանց տրամադրվվում են հետևյալ ծառայությունները.

1) գլխուղեղի և ողնուղեղի էնդովասկուլյար բուժում (ներառյալ միայն միկրոկաթետերի, միկրոպարույրի և օնիքսի արժեքը).

2) կլիպսների օգտագործում՝ նյարդավիրաբուժական վիրահատությունների ժամանակ.

3) շունտավորող համակարգերի օգտագործում՝ նյարդավիրաբուժական վիրահատությունների ժամանակ.

4) ստորին վերջույթների խոշոր և պերիֆերիկ զարկերակների և կորոնար անոթների ստենտավորում՝ դեղապատ առավելագույնը 3 ստենտով, բալոնային դիլատացիա՝ առավելագույնը 3 բալոնով, անգիոպլաստիկա.

5) սրտի բաց վիրահատություններ, աորտակորոնար շունտավորում.

6) սրտի փականների պրոթեզավորում.

7) սրտի կծկումները սինխրոնացնող ռիթմավար սարքերի (Pacemaker) իմպլանտացիա (միախոռոչանի և երկխոռոչանի)՝ 3 տարի շահագործման պայմաններով.

8) փորոքների կծկումները վերասինխրոնիզացնող ՍՌՎՍ իմպլանտացիա՝ 3 տարի շահագործման պայմաններով.

9) կարդիովերտտեր դեֆիբրիլյատորների իմպլանտացիա՝ 3 տարի շահագործման պայմաններով.

10) լրացուցիչ անցուղիների կաթետերային աբլացիա.

11) վերել և վայրէջ աորտայի վիրահատություններ՝ անկախ եղանակի.

12) բալոնային պլաստիկա կամ վալվուլոտոմիա սրտի բնածին արատների դեպքում.

13) տրանսկաթետերային եղանակով սրտի վիրահատական միջամտություններ՝ սրտի բնածին և կառուցվածքային (ձեռքբերովի) արատների դեպքում.

14) սիներակի (Վ.Կավա/V.Cava) ֆիլտրի տեղադրում (ներառյալ ֆիլտրի արժեքը), այդ թվում՝ ժամանակավոր.

15) բացառապես վնասվածքաբանական վիրահատությունների ժամանակ օգտագործվող մետաղական կոնստրուկցիաների՝ մեխերի, հարթակների, պտուտակների և շյուղերի կիրառում.

16) քարափշրում (լիթոտրիպսիա)՝ հեռահար, պերկուտան, ֆիբրոուրեթերոռենոսկոպիկ.

17) սկլերոպլաստիկա, կեռատոպլաստիկա:

10. Էլեկտրոնային արագացուցիչով ճառագայթային թերապևտիկ բուժումը IMRT և VMAT մեթոդներով՝ առողջության պահպանման և բարելավման ծրագրերի շրջանակում տրամադրվում է միայն սույն որոշման N 1 հավելվածի 7-րդ և 11-րդ ենթակետերում ընդգրկված անձանց, իսկ նույն հավելվածի մնացած խմբերում ընդգրկված անձանց՝ համավճարային սկզբունքի կիրառմամբ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

29.12.2025
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ